եթէ լեզու ունենային՝ կարելի է ևս այսոր նման շատ դէպքեր ալ կը հաղորդէին, յանցեալ գնացեալ Կամենիցի Հայկազանց նկատմամբ։

Ժ

ՔԻԵԻ, ԵՒ ԱՆՏԻ ԴԱՐՁ Ի ԹԷՈԴՈՍԻԱ

Կամենիցի մէջ 12 օր շրջելէն վերջը՝ անկենդան, անցած, մարած Հայութեան հրաժարականս տալով, և յանձն լինելով Հրաշագործ Տիրամօրս Հայոց, ճամբայ ելայ դէպ 'ի Քիեւ՝ սեպտ. 1 ին։

Կառաք 90 վերստ հարկ էր գնալ մինչև ցՓրոսքուրով. այլ որչափ տարբերութիւն քիչ օրուան մէջ. մէգ, մառախուղ, ցեխ. սակայն և այնպէս՝ երկրորդ կէս օրը հասայց գմեզ կառավարն՝ Փրոսքուրովի հանգոյցին երկաթուղւոյն. ուստի և շուտով մեկնեցայ շոգեկառաք, և սեպտեմբերի երեքին՝ կէս օրը հասայ 'ի Քիեւ։ Կայարանին տափաձև բարձրաւանդակին վրայ կանգ առնելով՝ կ'արժէ հայեցայ մի տալ այդ Փոքր Ռուսաց մայրաքաղաքին վրայ, որ յիրաւի ակնապարար և մոգական երևոյթ իմն կ'ընծայէ. բլրոց վրայ է քաղաքն, բուսականութիւնը ճոխ, որով կանաչութեան մէջ ընկղմած կ'երևի, վայելչաձև և նախշուն զանգակատունք գեղեցիկ կերպով աստի և անտի 'ի վեր կ'ամփառնան, քաղաքին լայն և դարուվար սալայատակներն՝ օձաձև կ'երևան, և այլ վիթխարի շէնքերն իբր 'ի մանրանկարի կը պատկերանան։ Ճշմարտապէս վիթխարի ասելու կ'արժէ մեծ և լայնանիստ համալսարանն՝ իւր պարտիզաւ, որ